ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանի գլխավորած պատվիրակության Վրաստան (Թբիլիսի) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձինք՝ Դավիթ Հարությունյան, Արթուր Հովհաննիսյան, Վիգեն Քոչարյան և Սուրեն Քրմոյան:

Գործուղված անձանց զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարար, ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալներ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Վրաստան (Թբիլիսի), 2017թ. հոկտեմբերի 19-ից 21-ը:

Հրավիրող կողմը՝ Վրաստանի արդարադատության նախարարություն:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն հայ-վրացական իրավական համագործակցության երկրորդ ֆորումին:

Քննարկված թեմաները՝ Հայ-վրացական իրավական համագործակցության երկրորդ ֆորումի ընթացքում քննարկվել են դատական բարեփոխումներին, երկու երկրների միջև քաղաքացիական և քրեական գործերով փոխադարձ իրավական օգնությանը, կոռուպցիայի դեմ պայքարին, մարդու իրավունքների պաշտպանությանը, անչափահասների արդարադատությանն առնչվող հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

2017թ. հոկտեմբերի 19-ից 20-ը Թբիլիսիում (Վրաստան) տեղի է ունեցել հայ-վրացական իրավական համագործակցության երկրորդ ֆորումը: Ֆորումին Հայաստանի Հանարապետության անունից մասնակցել է ՀՀ արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանի գլխավորած պատվիրակությունը: Պատվիրակության կազմում էին ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արթուր Հովհաննիսյանը, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալներ Վիգեն Քոչարյանը և Սուրեն Քրմոյանը:

Հարկ է նշել, որ հայ-վրացկան իրավական համագործակցության առաջին ֆորումը տեղի է ունեցել 2015թ. հունիսի 24-ից 26-ը Երևանում: Հայ-վրացական իրավական համագործակցության առաջին ֆորումին մասնակցելու նպատակով

Հայաստանի Հանրապետություն էին ժամանել Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ցուլուկիանիի, ինչպես նաև Վրաստանի պատիժների կատարման, պրոբացիայի և իրավական օգնության նախարար Գեորգի Մգեբրիշվիլի գլխավորած պատվիրակությունները: Առաջին իրավական ֆորումի շրջանակներում քննարկվել էր իրավական և դատական հարցերի լայն շրջանակ:

Հայ-վրացական իրավական համագործակցության երկրորդ ֆորումի շրջանակներում հանդես գալով բացման խոսքով՝ ՀՀ արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանը կարևորել է նման ֆորումների անցկացումը, և հայտնել, որ վերջիններս նպաստում են հետագա փոխշահավետ համագործակցությանն ու իրավական ոլորտում գործընկերության խորացմանը: Նախարարը համոզմունք է հայտնել, որ բարեփոխումների ճանապարհին միմյանցից սովորելու և մարտահրավերներին միասին դիմակայելու մեծ հնարավորություն է ստեղծված:

Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ցուլուկիանին իր բացման խոսքում նշել է, որ նմանատիպ ֆորումների կազմակերպումը իրավական ոլորտում երկու երկրների արդյունավետ և կառուցողական համագործակցության վկայությունն է: Թեա Ցուլուկիանին նաև համոզմունք է հայտնել, որ այս ֆորումը շարունակական կլինի, իսկ խնդիրների լուծմանն ուղղված համատեղ պայքարը՝ արդյունավետ:

Ֆորումի ընթացքում քննարկվել են երկու երկրների դատական բարեփոխումներին, քաղաքացիական և քրեական գործերով իրավական համագործակցությանը, երկու նախարարությունների աշխատակազմի Վերահսկողության ծառայությունների իրավասություններին, անչափահասների արդարադատության ոլորտում լավագույն փորձին վերաբերող մի շարք հարցեր, ինչպես նաև ներկայացվել են Հայաստանում քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտում ներդրված միասնական էլեկտրոնային համակարգը, հակակոռուպցիոն քաղաքականությունը, Պրոբացիայի ծառայության զարգացմանն ու քրեաատարողական ոլորտի բարեփոխմանն ուղղված աշխատանքները:

Հայ-վրացական իրավական համագործակցության երկրորդ ֆորումի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արթուր Հովհաննիսյանը ներկայացրել է ՀՀ օրենսդրական դաշտում տեղի ունեցող փոփոխությունները, մասնավորապես, անդրդադարձ է կատարել սահմանադրական բարեփոխումներից հետո ընդունված կամ փոփոխված իրավական ակտերին:

Հովհաննիսյանը վրացի գործընկերներին հայտնել է, որ մշակվել և հանրային քննարկման է դրվել նոր ՀՀ դատական օրենսգքրի նախագիծը, որի իրավակարգավորումները համապատասխանեցված են սահմանադրական դրույթներին:

Ֆորումի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալներ Վիգեն Քոչարյանը և Սուրեն Քրմոյանը հանդես են եկել ելույթներով:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանն անդրադարձ է կատարել մարդու իրավունքների պաշտպանության ապահովմանն ուղղված ՀՀ կառավարության քայլերին՝ ներկայացնելով ՀՀ կառավարության կողմից 2017թ. մայիսի 4-ին թիվ 483-Ն որոշմամբ ընդունված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրի մշակման գործընթացը՝ որպես քաղաքականություն մշակելիս հանրային կարծիքների ներգրավման լավ փորձ: Ֆորումի ընթացքում Վ. Քոչարյանը նշել է, որ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագրի կատարումը համակարգելու և մշտադիտարկելու նպատակով ստեղծվել է համակարգող խորհուրդ՝ բաղկացած ՀՀ պետական մարմինների ներկայցուցիչներից: Վ. Քոչարյանը հայտնել է, որ ՀՀ կառավարությունը կարևորելով հասարակական կազմակերպությունների դերակատարումը Գործողությունների ծրագրի արդյունավետ և ամբողջական իրականացման գործում, ամրագրել է, որ յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո համակարգող խորհուրդը կազմակերպում է հանրային քննարկում՝ ծրագրով նախատեսված գործողությունների կատարման ընթացքի վերաբերյալ:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանն իր ելույթում ներկայացրել է Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ ձեռնարկած քայլերը և արդեն իսկ արձանագրած հաջողությունները, պրոբացիայի ծառայության զարգացմանն ու քրեաատարողական ոլորտի բարեփոխմանն ուղղված աշխատանքները:

Այցի ընթացքում ՀՀ արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանը հանդիպումներ է ոունեցել Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ցուլուկիանիի և Վրաստանի պատիժների կատարման, պրոբացիայի և իրավական օգնության նախարար Կախա Կախիշվիլիի հետ:

ՀՀ արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանը Վրաստանի արդարադատության նախարարի հետ հանդիպման ընթացքում քննարկել են

դատաիրավական բարեփոխումներին վերաբերող մի շարք հարցեր, անդրադարձել Հայաստանում սահմանադրական բարեփոխումներին հաջորդած գործընթացներին, դրանց արդյունքում արդեն իսկ ընդունված և ներկայում մշակման փուլում գտնվող իրավական ակտերին, ինչպես նաև քննարկել անչափահասների արդարադատության ոլորտի բարեփոխումներին վերաբերող մի շարք հարցեր:

Հանդիպման ավարտին նախարար Հարությունյանն այցելել է Հանրային ծառայությունների մատուցման կենտրոն, որտեղ նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ քաղաքացիներին մատուցվում են 150-ը գերազանցող պետական ծառայություններ:

Վրաստանի պատիժների կատարման, պրոբացիայի և իրավական օգնության նախարարի Կախա Կախիշվիլիի հետ հանդիպմանը ՀՀ արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանը կարևորել է պրոբացիայի ծառայության ոլորտում Վրաստանի ունեցած ձեռքբերումներն ու ընդգծել փորձի փոխանակման ու արդյունավետ համագործակցության անհրաժեշտությունը:

Նախարար Կախիշվիլին ներկայացրել է պրոբացիոն ծառայության արդյունավետության բարձրացմանը, քրեակատարողական հիմնարկների բարեփոխմանն ու ՔԿՀ-ներում բժշկական ծառայությունների որակի բարելավմանն ուղղված իրենց աշխատանքը: Նա կարևորել է Հայաստանի ՔԿՀ-ներում էներգախնայողությանն ուղղված ծրագիրը և դրան ծանոթանալու ցանկություն է հայտնել՝ Վրաստանի ՔԿՀ-ներում այն իրագործելու հնարավորությունը քննարկելու համար:

Հանդիպման ավարտին նախարարները համագործակցությունը խորացնելու պատրաստակամություն են հայտնել:

ՀՀ արդարադատության նախարար

Դավիթ Հարությունյան